



“ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԻԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1894

ԹԻՒ 3

**ԹԵԼԵՄԱՔՈՍ ԿՐՈՆԱԻՐԸ**

Անոնք որ կ'ուզեն լսել սուսերամարտներու վրայ որ ժամանակաւ աեղի կ'ունենային Հռոմայ ամփիթէատրոնին մէջ, շատ տեղեկութիւններ պիտի գտնեն շարժական Ա-Ե-Քէրի երկու հետաքրքրաշարժ յօդուածներուն մէջ որ մօտերս երևցան. Այդպիսի հանդէսներու մէջ կը տեսնենք օրինակ մը թէ ինչպէս դժուար է ուղղել արմատացած յուսի սուփրութիւններ: Հռոմէական պետութիւնը անուանապէս քրիստոնեայ էր Մեծին կոստանդիանոսի օրերը: Նոր կրօնքն այնպէս ընդհանրացած էր որ բոլորովին պարապ եղան Յուլիանոս կայսեր չդարձեալ կուսպաշտութիւնն հաստատելու համար ըրած բոլոր ջանքերը: Եւ սակայն սուսերամարտները որ սիրելի էին Հռոմայեցւոց մինչև կոստանդիանոսի ժամանակը, աւելի քան չորս հարիւր տարիէ հետէ, տակաւին կը շարունակուէին թէպէտ Հռոմ քրիստոնեայ քաղաք մը եղած էր: Այդ արիւնահեղ և բարբարոսական դբօսանքները չվերցան մինչև ֆրիստոսի 404 թուականը, գրեթէ հարիւր տարի ետքը այն ժամանակէն երբ, կ'ըսուի թէ, կոստանդիանոս երկնից երեսը տեսաւ այն խաչը որոյ վրայ “Այսու յաղթեա” գրուած էր: Թէլէմաքոս կրօնաւորը վազեց ամփիթէատրոնին հրապարակը, իրարմէ գատելու համար կուռող սուսերամարտիկները: Զոհեց իր կեանքը, բայց կ'արժէր որ զոհեր զայն: Անոր մահը պատճառ եղաւ որ Ռոմիոս կայսր հրովարտակ հաննք ջնջելու համար այդպիսի կուռ



ԹԵԼԵՄԱՔՈՍ ԿՐՈՆԱԻՐԸ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻԿՆԵՐՈՆ ԵՐԵՅԵՂ

ները. և ուստի ոչ միայն շատ սուսերամարտիկներու կեանքերն ազատուեցան, այլ նաև ժողովուրդը ազատուեցաւ զիրենք անգութ վարժեցընող այն տեսարանէն: Անկարելի էր որ ֆրիստոնէութեան ճշմարիտ ոգին,

զատուեցաւ զիրենք անգութ վարժեցընող այն տեսարանէն: Անկարելի էր որ ֆրիստոնէութեան ճշմարիտ ոգին,

զատուեցաւ զիրենք անգութ վարժեցընող այն տեսարանէն: Անկարելի էր որ ֆրիստոնէութեան ճշմարիտ ոգին,

որ է խաղաղութիւն, ողորմութիւն  
և սէր, տիրէր ժողովուրդի մը մէջ  
որ զուարճութիւն կը զգար այնպիսի  
արիւնահեղ խաղերէ: Թէյէմաքոս  
արժանի է համարուելու իբրև ճշմա-  
րիտ մարտիրոս և եկեղեցւոյ մեծ բա-  
րերարաց մին:

**ՑԵԼՅԹ**

Հոլանտայի Տէլֆթ անուն փոքրիկ  
քաղաքը կը գտնուի Հասկ և Ռոթթեր-

էր ասկէ հարիւր յիսուն տարի առաջ:  
Տէլֆթ էր բնակավայրը Օրանժեանց  
վիլհելմ իշխանին որ կը կոչուի Հայր  
Հայրենեաց: Պատկերին մէջ կրնաք  
տեսնել դուռն անոր ապարանքին, ուր  
կը բնակէր և ուր մեռաւ: Տէլֆթի գրե-  
լատոր եկեղեցւոյն մէջ կը գտնուի ա-  
նոր գերեզմանը որ է հոյակապ յիշա-  
տակարան. և նոյն եկեղեցւոյն մէջ  
թաղուած են անկէ սերած Օւլէան-

անոնք կը խորհին թէ կրնան մեղան-  
չել ծածուկ և իրենց մեղքը պիտի չի-  
մացուի: Շատ տղայք կը փորձուին  
փոխանակ դպրոց երթալու, ասդին  
անդին անցնել ժամանակը, խորհելով  
թէ իրենց հայրը և մայրը երբեք պի-  
տի չիմանան: Շատ գողեր գիշեր ա-  
տեն տուն կը ծակեն, ներս կը մտնեն  
և կը գողնան իրենց ուզած բաները,  
վասն զի կը խորհին թէ մէկը չտես-  
ներ զիրենք, և երբեք պիտի չլմաց-  
ուի իրենց մեղքը: Չեզի պատմեմ այս  
առթիւ դէպք մը որ պատահեցաւ ի  
Գերմանիա, յամի Տեռուս 1804, 1էն-  
նէփ քաղաքին մէջ, ուր կը գտնուէր  
միակ նամակատունը շուրջը գտնուող  
գաւառին համար որ մզոններով երկիր  
կը պարունակէր:

Հայնրիխ Լուց անուն մարդ մը, նա-  
մակատան պաշտօնեայ, շարաթն ե-  
րեք անգամ սովոր էր Լէննէփէ առ-  
նել նամակներու պայուսակը և տա-  
նիլ քաղաքին բոլորտիքը գտնուող բո-  
լոր գեղերուն և տուներուն որ քանի  
մը մզոն հեռի էին: Հայնրիխ Լուց բա-  
րի և հաւատարիմ մարդ էր: Այս պաշ-  
տօնին մէջ կը գտնուէր բաւական տա-  
րիներէ հետէ, և շատ յարգի և սի-  
րելի եղած էր բոլոր զինք ճանչցող  
ներուն: Իր ճամբան կ'անցնէր խոր  
անտառէ մը ուր երբեմն աւազակու-  
թիւններ և մինչև անգամ սպանու-  
թիւններ պատահած էին:

Օր մը, վերոյիշեալ տարուոյ ճշնան  
եղանակին, Հայնրիխ ճամբայ ելաւ իր  
սովորութեան պէս, գաւառին մէջ  
պարտելու և պայուսակին մէջ գրու-  
նուած թուղթերը բաժնելու համար, և  
իր հետը բերելու համար նամակատան  
յանձնելի նամակները և թուղթերը  
զորս կ'ընդունէր գեղերէն և տունե-  
րէն: Ընդհանրապէս ճամբայ կ'ելլէր  
կանուխ նախաճաշելէ ետքը, և ետ կը  
գառնար ճիշդ երբ կ'անցնէր կէսօրը:

Յիշեալ օրը երբ կ'անցնէր խոր ան-  
տառէն, երկու աւազակներ յարձա-  
կեցան իր վրայ: Գետին տապալեցին  
զնա, և սկսան ծեծել իրենց ծանր  
բիրերով («\*»)։ Մինչ անոնք այս ան-  
գթութիւնը կ'ընէին, Հայնրիխ ըսաւ  
մարդասպաններուն, «Մի կարծէք թէ  
պիտի ազատուիք: Չեր մեղքը ձեզ  
պիտի դատէ: Աստուած կարող է եր-  
կինքի թուշուներուն անգամ պատ-  
մել տալ ձեր ըրածը:» Խօսած ժա-  
մանակը մատուցը կը ցոյցնէր նոյն միջո-  
ցին իրենց վրայէն թուշոյ զմայրի թու-  
շուներու երամ մը:

Հայնրիխի բարեկամները այդ երե-  
կոյ ճամբայ կը նայէին անոր ի Լէննէփ



ՕՐԱՆՅԱՆՑ ԱՐԼԷԻՄ ԻՇԽԱՆԻ ԵՊԱՐԱՆՈՒ ՄԵՃ ՄԱՍԸ

տամ աւելի մեծ քաղաքներուն մէջ-  
տեղ, անոնցմէ շատ քիչ հեռուորու-  
թեամբ: Ժէ. և ԺԸ. դարերուն մէջ  
հռչակաւոր էր իր յախճապակիներուն  
(Ֆալֆուր) համար. որովհետև կորսուած  
է վանոնք ներկելու և ապիկելու («բա-  
նա») արհեստը, հին Տէլֆթի յախճապա-  
կիները շատ կը փնտուռին հիմա, և  
շատ սուղ են: Այժմու քաղաքն ունի  
յախճապակիի գործարան մը, բայց  
քաղաքն այլ ևս գործունեայ տեղ մը  
չէ ձեռագործներու մասին, ինչպէս

եան իշխանները: Այդ եկեղեցւոյն  
մէջ կը տեսնուի նաև գերեզմանը օ-  
րենսպէտ Հիւկոյ կրթիւնի որ իր  
դարուն ամենէն կարող մարդոցմէ մին  
էր: Քաղաքին հրապարակին մէջ կը  
կանգնի կրթիւնի շքեղ արձանը:

**ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՂՔԻ ԴԵՄ**

«Գիտցէք որ ձեր մեղքը ձեզ պիտի չստէ:»  
Թու. ԼԵ. 23.  
Բաժն մը որ շատ անգամ մարդոց մե-  
ղանքներուն պատճառ կ'ըլլայ, սա է որ

վերադառնալուն, բայց չեկա նա : Յաջորդ առաւօտ անոր սպանման լուրը տարածուեցաւ և մարմինը բերուեցաւ տուն : Այդ բոլոր օրը մեծ յուզում կար քաղաքին մէջ :

Կէսօրէն ետքը երկու օտարականներ եկան քաղաքին պանդոկը . և խնդրեցին գիշերը հոն անցնել . յանձնարարեցին նաև երեկոյեան ճաշ : Պանդոկապետին կինը կը սպասուորէր օ-

մարդը ձերբակալուելով բանտ դրուեցաւ : Երբ քննութիւններ կատարուեցան, թղթատարական պայուսակին մէջ պարունակուած բաները գտնուեցան անոնց վրայէն : Խոստովանեցան իրենց ոճիրը, և ըսին թէ Հայրիշխի՛նչ ըսած էր թռչուններուն համար մինչ կը սպաննուէր : Մարդիկը դատուեցան, դատապարտուեցան և կախաղան հանուեցան : Անոնց մեղքը

չապաշխարհնք, հոն արձանագրուած պիտի մնան : Դատաստանին օրը յերեան պիտի գայ տոմարը, և անտարակոյս պիտի յայտնուին մեր մեղքերը :

ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍԻ ԴԱՐՁԸ

Երբեք դարձ մը եղած չէ աւելի յանկարծական և աւելի կատարեալ քան այն դարձը որ տեղի ունեցաւ Տարսնացի Սօղոսի ներսի դին Դամասկոսի ճամբուն վրայ : Պօղոս ճամբայ ելաւ իբրև զինուորեալ թշնամի և դառն հալածիչ Յիսուսի հետևողներուն, բայց իր ճամբուն վերջին հասաւ Յիսուսի անձնանուէր և հնազանդ աշակերտ մը եղած : Միշտ եղած էր առաջնորդ այլոց, և միշտ անկեղծ և եռանդուն անձ : Ինք կ'ըսէ թէ երբ կը հալածէր, կը խորհէր թէ պաշտօն կը մատուցանէ Աստուծոյ : Երբ երկնային յայտնութեամբ տեսաւ թէ ծուռ էր իր ըրածը, դարձաւ անմիջապէս և առանց վարանելու ըսաւ, «Տէր, ի՛նչ կ'ուզես որ ընեմ» : Եթէ իր դարձէն օր մը առաջ եկեղեցին փնտուած ըլլար թէ ո՛վ էր Յիսուսի կրօնքը տարածելու և հաստատելու ամենէն յարմար անձը, կարգաւ աւանանքն յետինը պիտի համարէր զՊօղոս : Բայց նա Աստուծոյ ընտրեալն էր, և իր ընթացքը կը ցուցնէ թէ ի՛նչ իմաստուն ընտրութիւն էր այս :

ՅԱՒԱԼԻ ԱՆՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Մր. Հ. Մ. Ուստ, Երիցական պաշտօնեայն ի Չինաստան, կ'ըսէ թէ մարդու սիրտը կտոր կտոր կ'ըլլայ տեսնելով հեթանոսութեան թշուառութիւնը զոր հնար չէ բերնով պատմել : Խօսած է մօտերս Չինաստանի քաղաքներէն միոյն մէջ բնակող երիտասարդի մը անձնասպանութեան վրայ : Երիտասարդին մարմինը գտնուեցաւ դետին մէջէն, հանդերձները՝ գետեղերէն, որոց վրայ գնդապետով փակցուած էր գրուած մը սա իմաստով : «Իս յուսահատած եմ երբեք սրտի խաղաղութիւն կամ հանգստութիւն գտնելէ . կանուխ զգացի թէ մեղաւոր էի, և ըսին ինձ թէ քուրմի մը պարտականութիւնները կատարելով տաճարներէն միոյն մէջ, գօ՛հ պիտի ըլլայի և հանդարտէի : Փորձեցի բայց չյաջողեցայ : Իմ բոլոր ստացուածքէն հրաժարեցայ և թախառեցայ տեղէ տեղ, խոնարհեցնելով անձս և ստրալով իմ օրական հացս : Գաջեցի անօթութիւն, ծարաւ, ցուրտ և կարսութիւն : Բայց բոլորն ալ ի գո՛ր» :



ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ ԴԱՐՁՍԵԱՍԻ ԶՄԵՐՈՒՆ ԿՐՈՑ

տարականներուն : Նա ուրիշ կերակուրներու հետ սեղան բերաւ նաև գոյգ մը խորոված վայրի թռչուն : Մինչ օտարականներէն մին կը ջարդէր թռչունները, սպասաւորող կինը լսեց որ ըսաւ իր ընկերին, «Անշուշտ այս թռչունները բան մը պիտի չպատմեն անոր վրայ» : Կինն արթնեցաւ լսելով զայս : Երբ նայեցաւ միւս մարդուն, արինքի քանի մը բիծեր տեսաւ անոր կապոյտ վերարկուին վրայ : Այս բանը սարսափեցուց զնա : Իսկոյն գնաց իր ամուսնոյն, և պատմեց ինչ որ տեսած և լսած էր : Չինուոր մը կանչուեցաւ,

յայտնուեցաւ փոքրիկ թռչուններուն միջոցաւ : Բայց մեղքերը երբեմն անյայտ կը մնան այս կեանքին մէջ : Ի՛նչ ուրեմն վերի բնաբանին խօսքը անոնց համար չէ : Այո, անոնց համար ալ է : Անոնք պիտի մնան մինչև դատաստանին օրը, և այն ատեն ամէն մեղք պիտի յայտնուի : Ամէն մէկ մեղք որ կը գործենք, արձանագրուած է Աստուծոյ յիշողութեան տոմարին մէջ : Եթէ զղանք մեր մեղքերուն վրայ, Յիսուսի արիւնը դանոնք ամէնքը պիտի ջնջէ : Բայց եթէ

